Ազգային քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը IV-IX դդ.

6
ԹԵՄԱ

Դաս 61 Մշակութային իրավիճակը Հայաստանում V դարում: Հայոց գրերի, հայալեզու դպրության ստեղծման անհրաժեշտությունը

Գիտեք, որ..

- *V դարի սկզբին հայոց պետականության ճգնաժամային շրջանում ծավալվել էր հոգևոր մշակույթի անկախացման և ազգային համախմբման շարժում՝ ուղղված անգիր հայոց լեզվին ազգային պետական բնույթ և դեր հաղորդելուն և ազգային գրի ստեղծմանը:*

- *Հայոց գրի ստեղծման մասին տեղեկությունները Ղազար Փարպեցին քաղել է Կորյունից: Փարպեցին, ըստ երևույթին, իր ձեռքի տակ ունեցել է Կորյունի աշխատությունը՝ նախնական հին խմբագրությամբ:*

- *Գրերի գյուտը սլավոնների և գոթերի մոտ, ինչպես Հայաստանում, նպատակ է ունեցել ստեղծելու քրիստոնեական գրականություն՝ տեղական լեզվով:*

Լրացուցիչ նյութեր

Հոգևորականության ձեռքով

V դարի սկզբներին արդեն առաջ է գալիս հայերեն գիրն ու գրավոր դպրությունը և այս ոչ թե ազնվական, այլ եկեղեցական դասի ձեռքով: Ազնվականներն այդ ժամանակ, առհասարակ իրենց բարքերով դեռ շատ կոպիտ էին, անձնական շահամոլական խնդիրներին հետամուտ, ուսմանը ոչ մի նշանակություն չտվող: Նրանք ապրում էին առանց զգալու գրի ու գրականության կարիքը: Եթե երբևէ գրավոր պայմանի կամ կալվածագրի պետք ունեին, այդ կատարել էին տալիս այլազգի գրերով ու լեզուներով: Նրանց բավարարում էր իրենց ավանդական բանահյուսությունը, բերանացի վեպերն ու պատմական երգերը և իրենց ուրախության ու կոծի բանաստեղծությունը: Դա նաև շինականության հոգևոր սնունդն էր: Փ. Բուզանդը գրում է, թե «նախարարների ու շինականների խառնիճաղանջ բազմության մտքերն զբաղված էին անպիտան, անօգուտ բաներով, ինչպես փոքր երեխաները, ովքեր մանկական հասակում տարվում են իրենց տղայական խաղալիքներով, պիտանի ու կարևոր բաների վերաբերյալ հոգ չեն տանում»:

Դաս 62 Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը

Գիտեք, որ..

- *Հրաչյա Աճառյանը մերժելով գրականության մեջ տարածված այն կարծիքը, թե Մ. Մաշտոցի կրթության «հելլենիստական շրջանը» անցել է Անտիոքում, ավելի հավանական է համարում, որ նա իր կրթությունն ստացել է Տարոնում, Սբ. Կարապետի հռչակավոր վանքում:*

- *Մաշտոցյան գրի հնագույն տեսակը կոչվել է երկաթագիր: Գիրն այդպես է կոչվել, որովհետև այն թանաքը, որով գրել են, պատրաստվում էր երկաթի ժանգից: Երկրորդ բացատրությունն այն է, որ սկզբում գրել են սովորել երկաթե սրածայր ձողիկներով, մոմապատ տախտակների վրա:*

- *Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործի վերաբերյալ կան շուրջ 30 հին և միջնադարյան վավերական աղբյուրներ:*

Լրացուցիչ նյութեր

Կարճ զրույց

Վռամշապուհ արքան քաջ գիտակցում էր, թե ինչ է նշանակում հայոց այբուբենի ստեղծումը: Ժամանակին հզորության հասած Հայաստանը երկփեղկվել էր. կեսին պարսիկներն էին իշխում, իսկ մյուս կեսին՝ հույները: Հայերեն գիրը ոգեշնչումի կոչ կդառնար, կհամախմբեր, կբարձրացներ հայոց ոգին: Ուստի արքան պաշտպան ու ոգևորող դարձավ Սահակ Պարթևի և Մեսրոպ վարդապետի ասածին:

– Վեհաշուք տեր, – զեկույց արեց սենեկապետ Ամպիկը՝ Արցախ աշխարհից արքունի դիվան ծառայելու եկած բարձրահասակ, վայելչատես սեպուհը, – տեսակցության է եկել հովվապետը հայոց: Նրա հետ է Մեսրոպ վարդապետը:

Զեկույցը սրտամոտ էր, արքան մտածմունքները հեռացրեց իր ճակատից և հայացքով հասկացրեց, որ ներս հրավիրի: Միաժամանակ արքայական թիկնապահները հասկացան, որ իրենք պետք է թողնեն գահասենյակը, որովհետև անելիք չունեն, արքան հյուրերի հետ պիտի միայնակ մնա:

Վռամշապուհ արքան հյուրերին հոտնկայս դիմավորեց.

– Ասփված բարի առաքելությամբ է օժտել այցելությունը ձեր, քահանայապետ:

– Պատվական ու սուրբ են խոսքերը հայոց արքայի, – պատասխանեց կաթողիկոսը:

Մաշտոցը կանգնած մնաց, ապա՝ արքայի հայացքը որսալով, տեղավորվեց հայոց աշխարհիկ և հոգևոր առաջնորդներից քիչ հեռու, դռան կողքին եղած բազկաթոռին: Զրույցը կարճ էր ու գործնական: Միջագետքում թագավորին ծանոթ Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ, նրա հայտնած տեղեկության համաձայն, հայոց նշանագրեր կան: Թե ինչ գրեր են դրանք, ովքեր են հորինել՝ ոչ ոք չգիտի: Կաթողիկոսը և վարդապետը խնդրում են թագավորին օգնել դրանք ձեռք բերելու: Վռամշապուհը խոստանում է և կատարում իր խոստումը:

Մեսրոպ Մաշտոց, նկարիչ՝
Ֆ. Մաջուտտո, XVIII դ.

Դաս 63 Դպրոց: Թարգմանական գրականություն: Հայ ինքնուրույն գրականություն

Գիտեք, որ...

- *Թարգմանիչ նշանակել է մեկնիչ, մեկնող, Աստվածաշնչի այս կամ այն դրույթը բացատրող:*
- *V դարը հայ մատենագրության մեջ կոչվել է «թարգմանչաց դար՝» նկատի ունենալով դրա նշանակությունը հայ մշակութի զարգացման մեջ:*
- *«Թարգմանիչ» են անվանվել հայ գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի և հայոց կաթողիկոս Սահակ Պարգևի շուրջ 100 սան, ովքեր անմիջականորեն աշակերտել են նրանց, չհաշված «կրտսեր թարգմանիչները», որոնք հիմնականում նրանց աշակերտների աշակերտներն էին:*
- *Իր կրթական ծրագիրն իրականացնելու համար Մաշտոցն իր շուրջը հավաքած երիտասարդներին անվանել է «եղբայրներ»:*

Լրացուցիչ նյութեր

Նիկողայոս Ադոնցի դիտարկումը

Մաշտոցյան գրերը կապում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության, իսկ վերջինս էլ հայ գրականության սկզբնավորման հետ: Պատմաբան Նիկողայոս Ադոնցն իր «Հայերեն Աստվածաշունչը և նրա պատմական զորությունը» հոդվածում խիստ ուշագրավ գնահատական է տալիս այդ կարևոր իրադարձությանը: Ադոնցը նկատել է, որ Աստվածաշնչի լատիներեն և հայերեն թարգմանությունները հասակակիցներ են՝ երկուսն էլ թարգմանվել են V դարի սկզբում, սակայն Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը երբեք չունի կարևորության այն աստիճանը, ինչ հայկականը: Պատճառը հետևյալն է. լատինական գրականությունը երկար դարեր արդեն գոյություն ուներ մինչև Աստվածաշնչի հանդես գալը, «մինչդեռ հայկական Աստվածաշունչը սկզբնավորեց հայ գրականությունը, սկզբնավորեց մի նոր դարաշրջան, որում Հայ ժողովրդն առաջին անգամ գրիչը ձեռքին իր տեղը զբաղեցրեց լուսավորված մարդկության շարքերում»:

Սուրբ Սահակ Պարթև, նկարիչ՝ Ս. Ներսիսյան, 1882թ.

Դաս 64 Պատմագրություն, փիլիսոփայություն, իրավագիտություն

Գիտեք, որ...

- *Ագաթանգեղոսը ոչ թե հատուկ անուն է, այլ մակդիր և նշանակում է բարի ավետաբեր (հունարեն ագաթա՝ լավ և անգելոս՝ լրաբեր, ավետաբեր): Ագաթանգեղոս պատմիչի անունը եղել է Գրիգոր:*

- *Եղիշեն վախճանվել է 470-ական թթ. Ռշտունիք գավառի ծովեզրյա մի այրում: Նրա մասունքները տեղափոխվել և թաղվել են Չաղարի Սբ. Աստվածածին վանքում, իսկ գերեզմանը դարձել է սրբավայր:*

- *Սեբեոսի պատմությունը XIII դարում կորած է համարվել: Նրա երկի բնագիրը գտնվել է XIX դարի սկզբներին՝ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերում և առաջին անգամ հրատարակվել է 1851 թ. Կ. Պոլսում:*

- *Միջնադարում հանցագործության համար մարդը կարող էր պատժվել 15 տարեկանից:*

Լրացուցիչ նյութեր

Օրենք «Կանոնագիրք Հայոցը»-ից

20. *Եթե որևէ տեղ ժողովրդի մեջ գտնվի չարագործ, երեցներն իմանան ու չհայտնեն եպիսկոպոսին, հետո, երբ քննությամբ պարզվի, որ իրոք այդպես է եղել՝ երեցը օրեր ու ամիսներ առաջ իմացել է այդ մասին և չի բողոքել եպիսկոպոսին, երեցը ենթակա է այն պատժին, որը սահմանված է մծղնեության համար: Նման երեցը չպիտի երեցություն անի իր ողջ կյանքում, որպեսզի նրան փոխարինող երեցը կամ վանականը տեսնելով այդ, ճշմարտությամբ հովվի ժողովրդին: Իսկ եթե երեցը իմացել է և հայտնել է եպիսկոպոսին ու վկայությամբ պարզվի, որ եպիսկոպոսը կաշառք վերցնելով, ծածկել կամ աչառու է գործել, և վկայությամբ հաստատվի, որ, իրոք, եպիսկոպոսը ականջի հետև է գցել երեցի բողոքը, արհամարհել է Աստծո պատվիրանը և կորստյան մատնածի խնդրով չի զբաղվել, աստվածային օրենքներին նախանձախնդիր և վրեժխնդիր չի գտնվել, նա պաշտոնանկ պիտի լինի՝ շնացողներին թաքցնելու համար, իսկ այդ դեպքում երեցն անպարտ է:*

Դաս 65 Բնական գիտություններ

Գիտեք, որ...

- *Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը մեզ հասած աշխարհի հնագույն դասագրքերից մեկն է և պարունակում է թվաբանական գործողությունների հնագույն աղյուսակներ:*
- *Պոնտոսի թագավոր Միհրդատը, ով Հին աշխարհի հռչակավոր բժիշկ էր ու թունագետ, իր հայտնի հակաթույնը պատրաստում էր Հայաստանի դեղաբույսերից:*
- *Անանիա Շիրակացին մաթեմատիկան համարում է բոլոր գիտությունների մայրը և ինքն էլ հայտնի է համարող (մաթեմատիկոս) մականունով:*

Լրացուցիչ նյութեր

Շիրակացին և Վենետիկի թագավորը

Շիրակացու մասին ժողովրդի մեջ ստեղծվել է մի ավանդություն, ըստ որի՝ նա ենթարկվելով հալածանքի, թողել է իր հայրենի երկիրը և ապաստանել Վենետիկում: Այստեղ նա ծառայության է մտնում Վենետիկի թագավորի մոտ, անում մի շարք գյուտեր, կարողանում է գտնել երկաթից ոսկի պատրաստելու գաղտնիքը: Վենետիկի թագավորը ցանկանալով գաղտնի պահել գյուտը, որոշում է սպանել Շիրակացուն, բայց Շիրակացին խնդրում է իրեն չսպանել: Նա խոստացում է գաղտնի պահել իր գյուտը և միայն պահանջում է թագավորից, որ նա ոսկի դրամի վրա դրոշմի իր նկարը:

Ավանդության մեջ ասվում է, որ մի դրամ է գտնված, որի մի երեսին Վենետիկի թագավորի նկարն է, իսկ մյուսին՝ Շիրակացու:

Անանիա Շիրակացու երազը

«Տիեզերագիտություն» աշխատության մեջ Անանիա Շիրակացին պատմում է, իբր թե ինքը Եվգենիայի տաճարում աղոթելիս մտածել է այն հարցի մասին, թե ինչ ձև ունի Երկիրը և քունը տարել է: Երազում, իբր թե տեսնում է, որ Արեգակը երիտասարդ տեսքով իջնում է Երկիր: Նա գնում է Արեգակին ընդառաջ, գրկում նրան և հարցնում, թե նա երբ է գնում երկրագնդի մյուս կողմը, ո՞ւմ է տալիս լույսը: Արեգակը պատասխանում է, որ Երկրի մյուս մասում կան անմարդաբնակ ձորեր, լեռներ, անձավներ, նրանց է տալիս լույսը:

Դաս 66 Կերպարվեստ

Գիտեք, որ...

- *Զվարթնոցի տաճարը փլվելուց հետո ավելի քան 8 դար հողաշերտի տակ է մնացել, հայտնաբերվել է XX դարի սկզբին կատարված պեղումների ընթացքում:*

- *Փարիզի Անի Շապել տաճարի (XIII դար) դռան բարձրաքանդակներում պատկերված է Նոյյան տապանը՝ Արարատ լեռան վրա, իսկ թիկունքում՝ Զվարթնոցի եռահարկ հրաշակերտ տաճարը:*

- *Դվինի տաճարում 1907 թ. հայտնաբերվել է Տիրամոր խճանկար-պատկերը, որը հավանաբար, պատկանում է VII դարի սկզբներին:*

- *Մանրանկարիչները հայ մատենագրության մեջ կոչվել են տարբեր անուններով՝ «ծաղկող», «նաղաշ», «ծաղկարար» և այլն:*

Լրացուցիչ նյութեր

Ներսես Տայեցին և Զվարթնոցի տաճարը

Ներսես Տայեցի կաթողիկոսը՝ որպես նրբանկատ մարդ, ոչ հարմար գտավ բազմաթիվ կրոնավորների՝ Վաղարշապատ քաղաքի կենտրոնում՝ Կաթողիկեի մոտ բնակվելը: Այդ նպատակով կենտրոնից մոտ 7 կմ. հեռու՝ Առապար Վաղարշապատի կոչվող դաշտում կառուցում է հոյակապ տաճար: Քանի որ տաճարի հիմքում ամփոփվեց Սբ. Գրիգոր Լուսավորչի մասունքը, այստեղից էլ կոչվեց Առապարի Սբ. Գրիգորի տաճար: Ի դեպ տաճարը կառուցվել է այն ճանապարհին, որտեղով Գրիգոր Լուսավորիչը ժամանել էր Վաղարշապատ:

Ժամանակի ընթացքում Առապարի Սբ. Գրիգորի տաճարն ավելի հայտնի դարձավ Զվարթնոց կամ Երկնավոր Զվարթնոց անուններով: Այդպես է կոչվել, որովհետև այն նվիրված է նաև երկնային զվարթուններին: Չէ՞ որ զվարթուն հայերեն նշանակել է նաև հրեշտակ: Այնպես որ, Զվարթնոց նշանակում է նաև «Հրեշտականոց»: Տաճարն իր հրաշագեղությամբ արժանի է աստվածային իր պատվին ու կոչմանը:

Դաս 67 Երաժշտություն: Կիրառական արվեստ

Գիտեք, որ...

- *Դվինի պեղումներից հայտնաբերվել են պարկապզուկի մնացորդներ, իսկ Գառնիում՝ ոսկե սրինգ:*
- *«Դաշանց թղթում» պահպանվել են հիշատակություններ շեփորների և երգեհոնների մասին:*
- *Վաղ միջնադարում Հայաստանում նույնիսկ բարձր մտավորականության ներկայացուցիչները հորինել են ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ երգեր, թեև դրանցից հատուկենտ նմուշներ են մեզ հասել:*
- *Աշխարհի թանգարաններում պահվող Սասանյանների կնիքների մի մասի վրա կան քրիստոնեական տեսարաններ ու Շուշան, Արտակ, Տրդատ, Արմենդուխտ անունները և ունեն հայկական ծագում:*

Լրացուցիչ նյութեր

Փղոսկրյա կազմ

Կիրառական արվեստի նշանավոր ստեղծագործություն է Էջմիածնի փղոսկրյա կազմը, որը VI դարի գործ է: Կազմի ինչպես առաջին, այնպես էլ վերջին երեսները բաղկացած են փղոսկրյա տախտակներից, որոնց վրա փորագրված են ավետարանական տեսարաններ: Առաջին երեսին փորագրված է Տիրամոր պատկերը՝ գահույքի վրա նստած, մանուկ Հիսուսը գրկին, որի կողքերին՝ տախտակների վրա քանդակված է ավետման, ծննդի տեսարաններ, վերևի տախտակին՝ խաչի փոխադրությունը, իսկ ներքևի տախտակին՝ մոգերի երկրպագությունը: Կազմի վերջին երեսի կենտրոնում քանդակված է Քրիստոսի պատկերը՝ պատվիրատուների տախտակը ձեռքին, երկու կողմում պատկերված են նրա հրաշագործություններից տեսարաններ: